ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԴԱՍԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Սողոմոն Եղիազարյանցը (1852—1914) XIX դ. հայկական գյուղական համայնքին նվիրված իր ծավալուն ուսումնասիրություններում, թերևս առաջինը հետազոտողներից, քանիցս ընդգծել ու յուրովի մեկնաբանել է համայնքի համադասայնությունը**։ *Նա կարևորել է այդ փաստը ոչ միայն համայնքի վարչատնտեսական կառուցվածքը, գյուղի տնտեսական կենցաղը լուսաբանելու համար, այլև՝ առհասարակ Արևելյան Հայաստանի նոր պատմաշրջանի (հետադարձ ակնարկներով՝ նաև ուշ միջնադարի) հողագույքային, սոցիալական հարաբերությունների առանձին հարցերի քննության կապակցությամբ։ Այս վերջին տեսանկյունից էլ, ներկա դեպքում, մեզ հետաքրքրում են համայնքի համադասայնությանը վերաբերող նրա դրույթները և մեր գրականության մեջ հանդիպող դրանց գնահատականները։*

Գյուղական համայնքը, որպես հասարակության հիմնական տնտեսական բջիջ և «արտադրական ամբողջություն»[1], *ներկայացնում էր, առաջին հերթին ու գլխավորապես, անմիջական արտադրողների՝ գյուղացիների դասակարգը, ի դեմս համայնիկ շինականների*[2]։ *Ուստի, բուն իսկ «համայնքի համադասայնություն» բնորոշմամբ ենթադրվում է, նախ, դասակարգ—դաս լայնիմաստ հասկացության ըմբռնում, հասարակության դասակարգային-դասային բաժանման փաստի արձանագրում, ապա՝ միևնույն համայնքում տարբեր դասերի ներկայացուցիչների առկայության ճանաչում։ Սակայն, ըստ ամենայնի, «դաս» արտահայտությունը Ս. Եղիազարյանցի դրույթներում ու եզրակացություններում չի ներառնում սոցիալ-դասակարգային այնպիսի լայն, համապարփակ բովանդակություն ևս, ինչպիսին այժմ ընդունված է։ Եվ բավական չէր լինի ասել, թե դա հետևանք էր նրա կողմից լոկ «դաս» և «դասակարգ» բառերի պայմանական, երբեմն՝ իրոք շփոթ օգտագործման։ Այլապես, ձևականորեն էլ տրամաբանելի չէր, մի կողմից, խոսել համայնքի համադասայնության մասին, մյուս կողմից պնդել, թե տակավին Արևելյան Հայաստանի խանություններում և առհասարակ «մահմեդական Արևելքում դասեր չկային»*[3]։ *Այս վերջին միտքն արդեն պետք է կանխեր համայնքի համադասայնության վերաբերյալ ամեն մի ենթադրություն։ Մինչդեռ Ս. Եղիազարյանցը համոզված պնդել է, որ միևնույն համայնքում «գյուղացիների հետ ապրում և պետական ու տե-*

---

* *Հոդվածում քննարկվող հարցերը հիմնականում առնչվում են Արևելյան Հայաստանի հայկական գյուղական համայնքի համադասայնության վերաբերյալ Ս. Եղիազարյանցի արտահայտած կարծիքին։*

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 376, 378։

2 *Ինքնուրույն պարզ վերարտադրության հնարավորությունները կորցրած առանձին կարգի գյուղացիները՝ ընչազուրկ-ռանչպարները, համայնիկի իրավունքներ ու պարտականություններ չունեին և, այդ իմաստով, չէին մտնում գյուղական համայնքի կազմի մեջ* (И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, с. 248, 249, 316, 317, *Ս. Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII—XVIII դդ. և XIX դ. առաջին քառորդում, Երևան, 1959, էջ 233)*։

3 С. А. Егиазаров, Формы общины и крестьянского землевладения в Тифлисской губернии («Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края» *(այսուհետև՝* «Свод материалов»), т. II, Тифлис, 1887, с. 414.

ռունի հողեր էին տիրում ուրիշ դասերի պատկանող, ճիշտ է՝ քիչ թվով մարդիկ»[4]։ Այստեղ նա նկատի է ունեցել «արտոնյալ դասը» ներկայացնող բեգերից, մելիքներից, աղաներից, առևտրականներից ու հայ հոգևորականներից ոմանց, որոնք, չնայած «դասային տարբերությանը, կողմնակի տարր չէին» համայնքում[5]։

Դյուրին է թվում այսքանից հետո արձանագրել բացահայտ հակասություն. դասեր առհասարակ չկային, միաժամանակ համայնքի «խառը կազմի»[6] (համադասայնության) հայտանիշը տարբեր դասերի մարդկանց առկայությունն էր նրանում։ Ավելին. Ս. Եղիազարյանցը նշել է, որ խանություններում «բացառությամբ տեղական ազնվականությունը կազմող մի քանի հին տոհմերի, մյուս բոլոր ծառայող դասակարգը չէր կազմում ազնվական դաս»[7], բայց այնուհետև նույն «ծառայող դասակարգի» մարդկանց (վերոհիշյալ բեգերին և այլոց) նույնպես ներկայացրել է իբրև «տեղական ազնվականություն»[8]։ Ընդ որում, նա պատմական մի զուգահեռով այդ ազնվականության աստիճանակարգերի առաջացումը բացատրել է հետևյալ կերպ. «Ինչպես հերցոգների, կոմսերի, բարոնների և այլ պաշտոններից ժամանակի ընթացքում (Եվրոպայում—Ս. Ա.) կազմվեցին առանձին ազնվականական տիտղոսներ, այնպես էլ մեզ մոտ, մուսուլմանական պրովինցիաներում, խաներից, սուլթաններից, մելիքներից, բեգերից ու նախիջևանից կազմվեցին տեղական ազնվականության աստիճանակարգերը»[9]։ Այսպիսով, ըստ Ս. Եղիազարյանցի, տեղական ազնվականությունը, բացառությամբ մի քանի հին տոհմերի, կազմում էր ոչ թե ազնվական դաս, այլ՝ «ծառայող դասակարգ»։ Պարզ տրամաբանությամբ այսօրինակ ամփոփումը կհանգեցներ «ազնվականություն» հասկացության բովանդակազրկմանը կամ բառի ինչ որ պայմանական օգտագործման գերակշիռ թիվ կազմող այն «ազնվականների» վերաբերմամբ, որոնց, այդպես կոչելով հանդերձ, չպետք է ներառնենք ազնվական դասի մեջ։ Սույն առնչությամբ Ս. Եղիազարյանցի երկու դրույթը ևս չեն լրացնում միմյանց, նույնիսկ անհարիր են։ Մի դեպքում նա նշել է, որ տեղական ազնվականությունն իր մեծ մասով (ի տարբերություն մի քանի հին տոհմերի) կողմնակի տարր չէր գյուղական համայնքում[10], մեկ այլ դեպքում վերջինիս համադասայնության հայտանիշ է ճանաչել այդ ազնվականության լոկ քիչ թվով ներկայացուցիչների տերունի հողատիրությունն ու մասնակցությունը համայնքի ներքին կյանքին[11]։ Սակայն մեզ համար կարևորը ոչ թե Ս. Եղիազարյանցի ակնարկած «ազնվական դասի» և «ծառայող դասակարգի» քանակական հարաբերակցությունն է, այլ՝ դրանց խմբավորման նրա սկզբունքը։ Հազիվ թե Ս. Եղիազարյանցն անտեսած լիներ հիշյալ հին տոհմերի՝ իր համոզմամբ ևս՝ ազնվական դասի մարդկանց առկայությունը պետական պաշտոնյաների (ծառայանու) շարքում։ Նա, ինչպես կտեսնենք, ելակետ է ընդունել այդ դասի և մյուս բոլոր տեղական ազնվականության կամ «ծառայող դասակարգի» տարբերակման մեկ այլ չափանիշ, ինչին և սերտորեն առնչված են համայնքի համադասայնության նրա մեկնաբանությունն ու «դասի», «դասակարգի», «ազնվականության» բնութագրումները։ Վերջապես, այդ բոլորը պայմանավորված է հողային սեփականության, հողադասային հարաբերությունների, մարդ-

---

4 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община (*այսուհետև՝* «Сельская община»), Казань, 1889, с. 1.

5 *Նույն տեղում, էջ 1—2։*

6 *Նույն տեղում, էջ 2։*

7 *Նույն տեղում, Առաջաբան, էջ II—III, նաև՝ էջ 2։*

8 *Նույն տեղում, էջ 1։*

9 *Նույն տեղում, էջ 4։*

10 С. А. Егиазаров, Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии («Свод материалов», т. I, ч. I, Тифлис, 1887, с. 4); «Сельская община», с. 6.

11 «Сельская обшина», с. 1.

կանց սոցիալական կացության և հասարակական դիրքի նրա ըմբռնմամբ։

Մեր գրականության մեջ հաճախ է արծարծվել Ս. Եղիազարյանցի առավել հանգուցային դրույթներից մեկը։ Ըստ այնմ, մահմեդական հավատագրքի սահմանումները՝ իմամի գերիշխանության տակ գտնվող երկրներում հողի մասնավոր սեփականության բացակայության մասին, իրականում դարձել էին անբովանդակ՝ առանձնապես ուշ միջնադարի և XIX դ. սկզբի Արևելյան Հայաստանի խանությունների վերաբերմամբ[12]։ Սույն դրույթի համակողմ գնահատումը կպահանջեր հողային սեփականության հարցի լայն քննություն։ Հիշենք միայն, որ այդ կապակցությամբ նա փաստարկել է միևնույն գյուղական համայնքում, մի կողմից, գյուղացիական ծխատիրական մուլքերի, մյուս կողմից՝ վերոհիշյալ «ուրիշ դասերի» մարդկանց հողերի (գնված, նվիրաբերված մուլքերի, գյուղի հողատարածքի 1/10-ի չափով գյուղական կառավարիչներին հատկացվող ախչատեղերի, անօգտագործելի-անմշակ տարածություններից անհատական հողագրավով մշակելի դարձած մազրաների) ժառանգական փոխանցումն ու ինքնակամ տնօրինումը[13]։ Սովորութական իրավունքով, նշել է Ս. Եղիազարյանցը, բոլոր այդ հողերը դիտվում էին իբրև տիրողների սեփականություն[14]։

Արդ, խնդրին մոտենալով լոկ հողի տնօրինման իրավունքի և ոչ թե՝ նրա տնտեսական իրացման, որպես որոշակի հասարակական հարաբերության տեսանկյունից, նա ի հաստատումն հողային սեփականության շատ ավելի լայնահուն հարցն արծարծող իր դրույթի, հավասարարժեք փաստարկ է ճանաչել և՛ հիմնական արտադրողների (շահագործվող համայնիկ գյուղացիների), մուլքատիրությունը և՛ բեգերի, մելիքների, աղաների, հայ հոգևորականների, առևտրականների անհատական հողատիրությունը։ Դժվար չէ կռահել ըստ էության տարբեր երևույթները համահարթող այսօրինակ մոտեցման ներքին սերտ կապը Ս. Եղիազարյանցի այն հայտարարություններին, թե՝ ա) Արևելքի երկրներում մարդու սոցիալական կացությունը որոշվում էր նրա զբաղմունքի տեսակով[15], բ) Արևելյան Հայաստանում գյուղում բնակվող և երկրագործությամբ զբաղվող բոլոր կարգի արտոնյալներն իրենց հասարակական դրությամբ պատկանում էին հողագործական դասակարգին, ինչպես գյուղական մյուս բնակչությունը[16], գ) տեղական ազնվականության մեծ մասն այստեղ, պարսից տիրապետության օրոք և մինչև XIX դ. երկրորդ կեսը, կառչած մնալով հողին, վերջնականորեն չէր առանձնացել գյուղացիությունից իբրև «հատուկ դաս՝ բառիս խիստ և տեխնիկական իմաստով և... ավելին չէր, քան ծառայող դասակարգ»[17]։ Վերջին վերապահությունը, որով ակնարկված է հատուկ դասի առանձնացում տեխնիկական իմաստով (անջատումը երկրագործությունից), լրացնում է Ս. Եղիազարյանցի նկատառումն առհասարակ ազնվականության ու «ծառայող դասակարգի» մարդկանց վերաբերյալ. նրանք գյուղացիների հետ նույն «դասակարգին» էին պատկանում՝ որչափ զբաղվում էին հողագործությամբ, ինչը խորթ էր մարդու ազնվական ծագմանն ու վիճակին։ Ուրեմն, երկրագործական զբաղմունքն այստեղ առաջադրվել է իբրև մարդկանց դասակարգային-դասային տարբերակման չափանիշ։

Հետաքրքիր է, որ այս բոլորի կողքին Ս. Եղիազարյանցի գործերում չենք գտնում որևէ եզրակացություն՝ գյուղաբնակչության սոցիալ-դասակարգային միատարրության վերաբերյալ։ Մինչդեռ նրա վերոհիշյալ դրույթների գնահատումը՝ դասակարգ-դաս հասկացության և մարդկանց սոցիալ-հասարակական

12 Նույն տեղում, էջ 137—138, տե՛ս նաև՝ «Свод материалов», т. II, с. 416.

13 «Сельская община», с. 1—2, 16—17, 18, 137—138, 148, 149, 150, 224, 227, 292; «Свод материалов», т. I, ч. I, с. 9—12, т. II, с. 416, 417, Ս. Եղիազարյանց, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, էջ 4—5։

14 «Сельская община», с. 150—152; «Свод материалов», т. I, ч. I, с. 9.

15 «Свод материалов», т. II, с. 384; «Сельская община», с. 2.

16 «Свод материалов», т. I, ч. I, с. 4; «Сельская община», с. 2.

17 «Сельская община», с. 6; «Свод материалов», т. I, ч. I, с. 4.

կացությունը որոշող գործոնների մեր ըմբռնմամբ, հանգեցնելու էր այդիմաստ եզրակացության։ Եվ տվյալ դեպքում ասել միայն, թե Ս. Եղիազարյանցի սեփական ամփոփումները անհետևողական կամ թերավարտ են, կնշանակեր շրջանցել հարցն ըստ էության։ Առերևույթ նույնիսկ թվում է, թե այդ դրույթները չեն համընկնում նրա հետևյալ պնդումներին. «Նախկին խանությունների հասարակական կարգը ուներ դասակարգային բնույթ»[18] և եթե Արևելքում չկային դասեր, սրանց խիստ «տեխնիկական» առանձնացման իմաստով, ապա կային «ժողովրդի տարբեր դասակարգեր»[19] (ուրեմն, պետք է հասկանալ՝ նաև դասակարգեր միևնույն «հողագործական դասակարգի» ներսում)։ Բայց բանն այն է, որ Ս. Եղիազարյանցը, որևէ ակնարկ չանելով գյուղաբնակչության սոցիալ-դասակարգային միատարրության մասին, այդուամենայնիվ, նկատի չի ունեցել իր շոշափած հարցի էությունը՝ հիմնական արտադրողների և շահագործողների դասակարգային բաժանման ու նրանց փոխհարաբերությունների բուն իսկ սոցիալ-տնտեսական հիմքերը։ Դրա փոխարեն նա մատնանշել է «ժողովրդի տարբեր դասակարգերի» այնպիսի տարբերություններ ևս, որոնց մակերեսային ընդգծումը, հեռացնելով «դասակարգ» բնորոշման հիմնական բովանդակությունից, այդ բառի գործադրումն իսկ դարձրել է խիստ պայմանական։

Այսպես. ըստ Ս. Եղիազարյանցի, գյուղաբնակչությունը կազմված էր «գյուղական արտոնյալների դասակարգերից»[20] և «ռայաթ կոչվող հարկատու դասից»[21]։ Առաջինների շարքում նա դասել է թագավորական հրովարտակ կամ խանական թալրա ունեցող «իսկական բեգերին ու մելիքներին», ապա՝ «ժամանակավորապես համայնքներ կառավարող» ու դրա շնորհիվ պետական հարկից ազատվող բեգերին, մելիքներին, նաիբներին, գեղջավագներին, վերջապես՝ հայ հոգևորականներին[22]։ Ընդ որում, ինչպես տեսանք, այս երեք «դասակարգերը», բացառյալ երկրագործությամբ չզբաղվող որոշ ազնվական հին տոհմեր, նրա կարծիքով, գյուղացիների հետ միասին պատկանում էին «հողագործական դասակարգին», այն տարբերությամբ, որ ազատվում էին (ճիշտ կլինի ասել՝ հատուկ առանձնաշնորհումներով կարող էին ազատվել) հարկից։ Սակայն պարզ է, որ մասնակի կամ լրիվ ապահարկման հարցն անմիջապես վերաբերում է գանձարանի և արտոնյալների՝ իբրև անհատ հարկատու տնտեսատերերի, ոչ թե՝ վերջիններիս ու շահագործվող ռենտատու գյուղացիության փոխհարաբերություններին։

Այնուհետև Ս. Եղիազարյանցը մի քանի «դասակարգեր» է մատնանշել նույնիսկ արտադրող գյուղացիության կամ «ռայաթ կոչվող հարկատու դասի» ներսում. ա) «հարկատու (պետական—Ս. Ա.) հողերի» վրա բնակվող մեծաթիվ գյուղացիների դասակարգ, բ) տերունի կամ մուլքադարական գյուղերում բնակվող գյուղացիների դասակարգ, վերջապես՝ գ) յարիքյար-կիսարարների և ընչազուրկ-ռանչպարների դասակարգ[23]։ Այստեղ ևս ակնբախ է շփոթությունը. երեք կարգի (կատեգորիաների) գյուղացիները, որոնք կազմում էին մի դասակարգ, ներկայացված են իբրև «ժողովրդի տարբեր դասակարգեր»։ Սրանց խմբավորումը «դաս» անվան տակ լիարժեք իմաստ կունենար, եթե առանձնացման չափանիշ դիտվեր ոչ միայն պետական հարկաբաժնի վճարումը, որից կարող էին արտոնվել վերոհիշյալ մյուս «դասակարգերը», այլև՝ վերջիններիս օգտին մասնահանվող հողային ռենտան։

Ինչպե՞ս է գնահատվել այս ամենը մեր պատմագիտական գրականության մեջ։ Նախ հիշենք, որ «ստրկատիրական ու ֆեոդալական (ինչպես նաև ճորտատիրական) հասարակության դասակարգերը նաև առանձին դասեր էին»[24],

18 «Сельская община», с. 2.

19 «Свод материалов», т. II, с. 414.

20 «Свод материалов», т. I, ч. I, с. 1—3.

21 «Сельская община», с. 15.

22 «Свод материалов», т. I, ч. I, с. 1—3.

23 «Сельская община», с. 15—16.

24 *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 6, էջ 387։*

այսինքն՝ նախակապիտալիստական այդ երկու հասարակության դասակարգերից յուրաքանչյուրին վերաբերելի է «դասակարգ-դաս»[25] հասկացությունը։ Սովետական հետազոտողներից Ս. Մարկոսյանը նկատել է, որ Ս. Եղիազարյանցն այդ հասկացության բովանդակությունը հանգեցրել է մարդկանց զբաղմունքին՝ որչափ անտեսել է ֆեոդալական ռենտայի մասնատիրմամբ օժտված բեգամուլքադարական դասի իսկապես արտոնյալ վիճակը՝ սրա լայն դասակարգային էությամբ, և այդպիսով «շատ վաղուց կատարված տնտեսական առանձնացումը»[26] գյուղացիությունից, այսինքն՝ բուն իսկ դասակարգագոյացումը[27]։ Ավելի պարզ՝ Ս. Եղիազարյանցը, յուրովի ընդգծելով համայնքի համադասայնությունը, շրջանցել է գլխավորը՝ միևնույն համայնքում արտադրողների կողմից բահրա-ռենտայի վճարման և շահագործող դասակարգի մարդկանց կողմից նրա յուրացման փաստի սոցիալ-հասարակական հիմնաբար նշանակությունը։ Միաժամանակ, Ս. Մարկոսյանի համոզմամբ, Ս. Եղիազարյանցը «միանգամայն ճիշտ է նկատել բեգա-մուլքադարական դասի իրավական դրությունը իրանական տիրապետության շրջանում»[28]։ Խոսքն այն մասին է, որ իբր այդ դասի «իրավական առանձնացումը (գյուղացիությունից—Ս. Ա.) կատարվել է միայն ռուսական տիրապետության շրջանում»[29]։ Սույն պնդումը մեզ թվում է անհարկի անվերապահ՝ և՛ ըստ էության, և՛ Ս. Եղիազարյանցի դրույթների ստույգ գնահատման տեսանկյունից։

Ս. Մարկոսյանը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ (Ս. Եղիազարյանցի կարծիքով ևս) պարսկական տիրապետության շրջանում «ճոդի (տերունի հողերի—Ս. Ա.) տիրապետման վերաբերյալ բեգա-մուլքադարական դասն իրավականորեն չէր տարբերվում համայնիկ գյուղացուց»[30]։ Հիշենք նաև, որ Ս. Եղիազարյանցը քանիցս ակնարկել է 1864 թ. հայտնի կանոնադրությունը գյուղական համայնքների մասին, որով «մյուս դասերի ներկայացուցիչները (զանազան արտոնյալները—Ս. Ա.) վերջնականապես հեռացվեցին համայնական գործերից և իրավաբանորեն կազմվեց դասային համայնք»[31]։ Սակայն այս փաստարկները բավարար չեն վերոհիշյալ լայնահուն և այդքան անվերապահ եզրակացությունը հաստատելու համար։ Դասի իրավական առանձնացումը սոցիալ-հասարակական ավելի համապարփակ երևույթ է, որը տվյալ դեպքում չի կարելի սահմանագծել լոկ համայնքի ներքին կառավարման գործերից արտոնյալների հեռացմամբ կամ երկրագործությունից նրանց անջատմամբ։ Հավասարապես և՝ պարսկական տիրապետության շրջանի բեգա-մուլքադարական դասի իրավական դրությունը չի կարող հայտանշվել միայն նրա տերունի հողատիրության բնույթով, որին ընդգծված ուշադրություն է հատկացրել Ս. Մարկոսյանը։ Ընդունելով, որ այդ հողատիրությունը, ինչպես հողի տնօրինման իրավունքի, այնպես էլ հարկատվության (փոքր բահրա-հնգորդի վճարման) առումով (բացառությամբ այն դեպքերի, երբ հողատերը պետական արտոնագրով կամ համայնքի հանձնառությամբ ապահարկվում էր) սկզբունքորեն չէր տարբերվում գյուղացիական ծխատիրական մուլքատիրությունից, ճիշտ չէր լինի ասել նույնիսկ, թե բեգա-մուլքադարական դասի (դասակարգի) շատ վաղուց կատարված տնտեսական առանձնացումը հարյուրամյակներ շարունակ (մինչև 1860-ական թվականները) չէր ուղեկցվել նրա իրավական առանձնացմամբ՝ առհասարակ։ Այլապես կարող է ստեղծվել այն թյուր պատկերացումը, թե տիրող դասակարգը և անմիջական արտադրողները միևնույն իրավական դիրքում էին պետության մեջ ու նրա հանդեպ։ Հարկ է շեշտել, որ նախակապիտալիստական հասարակություններում դասակարգերի տարբերությունը

25 Վ. Ի. Լենին, Նկտ, հ. 6, էջ 387։

26 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 107։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, հմմտ.՝ С. А. Егиазаров, Сельская община, с. 6.

30 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 108։

31 «Сельская община», Предисловие, с. 111.

«ֆիքսացիայի էր ենթարկվում բնակչության նաև դասային բաժանման մեջ, ուղեկցվում էր յուրաքանչյուր դասակարգի համար պետության մեջ առանձին իրավական տեղ սահմանելով»[32]։ Նկատենք, որ լենինյան այս ամփոփումը վերաբերում է ֆեոդալիզմին ընդհանրապես և ոչ թե նրա զարգացման առանձին պատմաշրջաններին կամ՝ տարբեր երկրներում ըստ էության միևնույն ֆեոդալական հողա-դասային հարաբերությունների ու դրանց իրավաբանական դրսևորման առանձնահատուկ կողմերին։ Պետք էր հետևողականորեն պնդել, որ ֆեոդալական հասարակության բաժանումը դասակարգ-դասերի՝ և՛ նրանց տնտեսական առանձնացման, և՛ իրավական դրության առումով, հայտանշվում էր ոչ թե հողային սեփականության տիրապետող (պետական կամ մասնավոր) կոնկրետ ձևով ու հողի իրային-առարկայական տնօրինման իրավունքներով, այլ՝ նրա տնտեսական իրացման շուրջ գոյացած որոշակի սոցիալ-դասակարգային փոխհարաբերություններով։ Վերջիններիս բովանդակությունը, բոլոր դեպքերում (անկախ սեփականության ձևից) ուղղակի, արտատնտեսական հարկադրանքով անմիջական արտադրողներից քամվող հավելյալ արդյունքն էր և սրա՝ իբրև ֆեոդալական ռենտայի կամ հարկ-ռենտայի անաշխատ յուրացումը տիրող դասակարգի կողմից։ Տեսական այս լայն նկատառումով Ս. Եղիազարյանցի դրույթներն անընդունելի են՝ որչափ արծարծում են Արևելյան Հայաստանի «բարձր դասի» և՛ տնտեսական, և՛ իրավական առանձնացում գյուղացիական դասակարգից միայն XIX դ. երկրորդ կեսին։ Չկարևորելով այն իրողությունը, որ Արևելյան Հայաստանի «ծառայող դասակարգը» (ծառայանին) արդեն իսկ որոշակի տնտեսական և իրավական տեղ էր զբաղեցնում տվյալ երկրի հասարակության մեջ, նա բեգ-մուլքադարների դասակարգային-դասային առանձնացման համար ակնկալել է իրավաբանորեն ձևակերպված ազնվականական «քաղաքացիության» այնպիսի արտոնակարգ և հասարակական-քաղաքական այնպիսի կազմակերպված դեր, որպիսիք այլ երկրներում պայմանավորված էին ֆեոդալական հողադասային հարաբերությունների ուրիշ ձևերով։ Բնորոշ է, որ Ս. Եղիազարյանցն Արևելքի երկրներում «հասարակության առանձին դասակարգերի»[33] գոյություն մատնանշել է «բացառապես Վրաստանում, ուր ծառայող դասակարգը, դեռ մինչև Ռուսաստանին միանալը, հասցրել էր կազմել ազնվական դաս, որն առաջնակարգ դեր էր խաղում ժողովրդի կյանքում և գյուղացիական դասի մեծ մասին պահում է ճորտային կախման մեջ»[34]։ Հարկավ, սույն չափանիշով մուլքադարների սոցիալ-հասարակական կացությունը բնութագրելիս, հետազոտողը պետք է նշեր, որ նրանք ճորտատերեր չէին, շատերն էլ իրենց զբաղմունքով, «նույնիսկ կրթությամբ ու կենցաղակերպով չէին տարբերվում գյուղական մյուս բնակչությունից»[35]։ Բայց մի երկրին բնորոշ չափանիշներով ընդհանրապես բացասել տիրող դասակարգի և գյուղացիության առանձնացումը մյուս երկրում՝ կնշանակեր հրաժարվել կոնկրետ պատմականության սկզբունքից։ Խոսք կարող է լինել այս կամ այն երկրում յուրաքանչյուր դասակարգի ու դասի իրավունքների «հատկության, չափի ու քանակության»[36] մասին։ Վրաստանին վերաբերող տողերը առավել պարզությամբ ցույց են տալիս, որ Ս. Եղիազարյանցի համոզմամբ բեգա-մուլքադարական դասը, որպես այդպիսին, առհասարակ չէր առանձնացել գյուղացիությունից, քանի դեռ (ի տարբերություն վրաց ազնվականների) հասարակության առանձին դասակարգ չէր՝ սոցիալ-իրավական առումով։ Այս ընդհանուր դրույթից անջատել ու դրական որեն գնահատել նույն հեղինակի նը-

32 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 6, էջ 387։

33 «Свод материалов», т. II, с. 384.

34 Նույն տեղում։

35 «Сельская община», с. 6; «Свод материалов», т. I, ч. I, с. 4.

36 Ս. Եղիազարյանցը մեկ այլ առիթով տարբերակել է «իրավունքի հատկություն» և «իրավունքի չափ, քանակություն» հասկացությունները (Ս. Եղիազարյանց, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, էջ 23)։

կատառումներն այդ դասի իրավական դրության լոկ որոշ գծերի մասին (ինչպես դա արել է Ս. Մարկոսյանը), մեր կարծիքով, տրամաբանված չէ՝ թե՛ տեսականորեն, թե՛ պատմագրական քննության մեթոդի առումով։ Ընդհակառակը, Ս. Մարկոսյանի վերոհիշյալ դիտողությունը հասարակության լիակատար դասակարգային բաժանման վերաբերյալ մենք արժեքավոր կհամարեինք այնքանով, որքանով այն մեկնակետ է տալիս ամբողջությամբ վերցրած խրնդրին մոտենալու ֆեոդալական հարաբերությունների էության և ոչ թե միայն դրանց ինչ-ինչ ձևերի ու վերջիններիս իրավաբանական սահմանադրումների տեսանկյունից։ Ուստի, նույն այդ լայն տեսանկյունից, ճիշտ չէր լինի խոսել նաև բեգա-մուլքադարական դասի իրավական դրության կամ իբր միայն 1860-ական թվականներին կատարված նրա «իրավական առանձնացման» մասին՝ չընդգծելով, առաջին հերթին, հենց հողային հարկ-ռենտայի բաժնետիրման նրա անժամկետ պայմանական-ժառանգական ֆեոդալական իրավունքը, վարչակառավարչական և զինվորական պաշտոնավարությունը (Ս. Եղիազարյանցի ակնարկած տարբեր աստիճանակարգերով), ապա՝ իշխողի դիրքը համայնքում ու հասարակության մեջ, օրենքով սահմանված ու չսահմանված (սովորական դարձած, հաճախ ժառանգաբար փոխանցվող), զանազան արտոնությունները դեռ նախորդ հարյուրամյակներում։

Ի դեպ, անարդարացի կլիներ շրջանցել հետևյալ փաստը. Ս. Եղիազարյանցը, ինչպես և XIX դ.—XX դ. սկզբի մի շարք հետազոտողներ, մուլքադարությունն ու թիուլատիրությունը չի կապել հողի (մուլքատու կամ թիուլատու գյուղի) մասնավոր կալվածատիրական սեփականատիրման իրավունքի հետ, բայց դրանով հանդերձ արձանագրել է ֆեոդալական հարաբերությունների գոյությունը ուշ միջնադարի Արևելյան Հայաստանում։ «Նոր համեմատական ազգագիտությունը,— գրել է նա,— ապացուցում է, թե ֆեոդալական կարգը և հողատիրությունը հատկանիշ է ոչ միայն եվրոպացիներին, այլև համարյա բոլոր ասիական և ամերիկական... ազգերին։ Իհարկե, ամեն մի երկիր տալիս է ֆեոդալիզմին իր առանձնահատկությունը, բայց էությունը և բովանդակությունը—մանավանդ հողատիրապետական հարաբերությունների—մնում է միևնույնը։ Ընթերցողի ուշադրությունը դարձնում ենք Պարսկաստանի վրա. մենք մասամբ սրան ենք պարտական մեր կալվածքների (կարդա՝ կալվածային համակարգի—Ս. Ա.) գոյությունով։ Պարսկաստանում, եթե չենք սխալվում, ֆեոդալական հարաբերությունները մինչև այսօր էլ (1880-ական թվականներին—Ս. Ա.) շարունակում են իրենց գոյությունը»[37]։ Հիրավի, ուշագրավ

---

37 Ս. Եղիազարյանց, նշվ. աշխ., էջ 18—19։ Տարակուսանք է հարուցում առայժմ անառարկելի ճանաչված մի անվերապահ պնդում, ըստ որի XIX դ.—XX դ. սկզբի հեղինակները (սկսած Ի. Շոպենից), ժխտելով մուլքադարների և թիուլդարների սեփականատիրական իրավունքները նրանց պատկանող գյուղերի (հողերի) նկատմամբ՝ դրանով իսկ բացառում էին «ֆեոդալական հարաբերությունների», «ֆեոդալական հողատիրության» գոյությունն Արևելյան Հայաստանում՝ Ռուսաստանի հետ նրա միավորմանը նախորդող շրջանում (И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 57, 222—223, Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 13, 17, 28)։ Իհարկե, խոսք չի կարող լինել այդ հեղինակների գործերում հողային սեփականության ձևերին և արտադրահարաբերությունների էությանը վերաբերող լայն հարցադրումների ու տեսականորեն հիմնավոր լուծումների մասին։ Ուրեմն, Ի. Շոպենին և մյուսներին քննադատելիս առավել ևս անհրաժեշտ էր գտնե նշել, թե ինչո՞ւ նրանք չկարողացան ըմբռնել գոյություն ունեցող հարաբերությունների համակարգն իր ձևավորման ու զարգացման մեջ և եթե բացառում էին ֆեոդալական կարգերի առկայությունը տվյալ երկրում՝ փոխարենն ի՞նչ էին տեսնում։ Համենայնդեպս, լոկ հայտարարած կլինեինք, թե, օրինակ, Ի. Շոպենը և Ս. Էսաձեն ժխտում էին ֆեոդալական հողատիրության գոյությունն Արևելյան Հայաստանում, եթե ըստ էության չքննեինք այն փաստը, որ Ի. Շոպենի կարծիքով մուլքադարների ու թիուլդարների «ծագումը... կատարելապես միակերպ է ֆեոդալական հողատերերի ծագմանը Եվրոպայում» (И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, с.

դիտողություններ են սրանք, որոնք կարող էին ամրապնդվել ֆեոդալիզմի հիմնական տնտեսական օրենքին առնչվող հանգուցային հարցերի բազմակողմ քննությամբ։ Մասնավորապես նկատի ունենք Արևելյան Հայաստանում հարկի ձև ընդունած ռենտայի հարցը, որն անմիջապես վերաբերում է հողա-դասային հարաբերությունների միևնույն ֆեոդալական էությանը՝ հողի ֆեոդալական սեփականության պետական ձևի գերիշխման պայմաններում։ Սակայն Ս. Եղիազարյանցի գործերում չենք գտնում այդպիսի քննության քիչ թե շատ խոստումնալից փորձեր։ Ինչպես նշեցինք, հողային սեփականության հանգուցային հարցին էլ նա անդրադարձել է լոկ հողի իրային-առարկայական տնօրինման իրավունքի տեսանկյունից։ Ներկա դեպքում, մեզ հետաքրքրող կոնկրետ խնդրի կապակցությամբ, նույնիսկ դժվար է ասել, թե Ս. Եղիազարյանցն ինչպես է պատկերացրել ֆեոդալիզմի, ֆեոդալական կարգի էությունն ու առանձնահատկություններն Արևելյան Հայաստանում, երբ բացասել է հասարակության առանձին դասակարգերի գոյությունն այնտեղ։ Այդ բացասումը լրացնում են գյուղական համայնքի՝ ըստ էության դասակարգային միատարրությանը վերաբերող և դասակարգ-դաս լայնիմաստ հասկացությունը բովանդակազրկող կանխադրույթները, որոնք նա փորձել է հիմնավորել մարդկանց միատեսակ զբաղմունքի ու, դրա հետ կապված, տերունի հողատիրության և գյուղացիական մուլքատիրության միանշանակ փաստարկմամբ։ Ճիշտ է՝ ֆեոդալիզմի դարաշրջանում գյուղացիական «հողատիրության» ձևերը կարող էին փոփոխվել կոնկրետ պատմական պայմաններում ու լինել բազմակերպ՝ սկսած հողի (հաճախ նույն տերունի հողերի) կարճժամկետ վարձակալությունից մինչև անժամկետ-ժառանգական «տիրում», որը և «երբեմն մերձավորապես հիշեցնում է լրիվ սեփականություն»[38]։ Սակայն այդ «հողատիրությունը», առաջին հերթին, հասարակական արտադրությունն ու «արտատնտեսական հարկադրանքով» հիմնական արտադրողների ֆեոդալական շահագործումը կազմակերպելու տնտեսական նախադրյալն էր։ Անգիտանալով այդ իրողությունը և մարդկանց սոցիալ-հասարակական կացության բնորոշ հայտանիշ ճանաչելով նրանց զբաղմունքի տեսակը՝ Ս. Եղիազարյանցը չպետք է կարողանար հստակ պատկերացնել իր իսկ նշած ֆեոդալական հարաբերությունների ֆիքսացիան հասարակության դասակարգային բաժանման մեջ՝ դասակարգ-դասերի թե՛ տնտեսական, թե՛ իրավական առանձնացման առումով։

Այսպիսով, Ս. Եղիազարյանցի վերոհիշյալ իրարամերժ կամ անհարիր դրույթները՝ առաջադրված հայկական գյուղական համայնքի համադասայնության փաստի մեկնաբանության առթիվ, տչ թե լոկ «դաս», «դասակարգ», «ազնվականություն» բառերի պայմանական, երբեմն՝ շփոթ գործառման հետևանք են, այլ՝ սկիզբ են առնում ֆեոդալական հողա-դասային հարաբերությունների և մարդկանց սոցիալական դրության կարևոր հարցերի մակերեսային արծարծման տեսական-մեթոդոլոգիական խոցելի ակունքներից։

925—926), իսկ Ս. Էսաձեի համոզմամբ մուլքն ու թիուլը, որպես բնակելի կալվածքների տիրման ձևեր, «համարյա միատեսակ նշանակություն ունեին» և «առաջացել էին իրավունքի նույն ակունքներից», ինչպիսիք ուներ «ֆեոդային կամ լենային իրավունքը գերմանական դրությունների մեջ» (С Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, с. 546—547)։ Ֆեոդալական առանձնաշնորհման այդ միատեսակ ձևերը, նրանց կարծիքով, պարզապես զարգացման նույն ընթացքը չունեցան Եվրոպայում և այստեղ։

[38] Б. Ф. Поршнев, Феодализм и народные массы, М., 1964, с. 36.

К ВОПРОСУ О ВСЕСОСЛОВНОСТИ АРМЯНСКОЙ СЕЛЬСКОЙ ОБЩИНЫ

САМВЕЛ АЛЕКСАНЯН

Резюме

С. Егиазаров неоднократно подчеркивал всесословность армянской сельской общины. Однако, считая «вид занятия» людей определяющим их социальное состояние и положение в обществе в странах Востока вообще, он выдвинул несостоятельный тезис о том, будто «высшее сословие» Восточной Армении позднего средневековья и первой половины XIX в. большей своей частью (за исключением некоторых наследственно-родовых беков и меликов) вместе с остальным сельским населением принадлежало к одному и тому же «земледельческому классу». По С. Егиазарову экономическое и правовое обособление всякого рода «привилегированных», живущих в деревне, от крестьянства имело место лишь с 1860-х годов (с утверждением Положения о «сословной общине» в 1864 г.). Здесь очевидно недопонимание фундаментального значения основного вопроса феодальной земельной собственности, то есть классовой сути экономической реализации земли (феодальной ренты). Последствием этого и являются противоречивые суждения С. Егиазарова, затрагивающие вопрос о сословно-классовой структуре восточноармянского общества и весьма абстрактное применение им терминов «сословие», «класс», «дворянство», «служилый класс», а также искусственное сужение им понятия «правовое обособление».